2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմենուհի Ժորայի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

31.08.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2023 թվականի №2190Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ՎԿԱՅԱԿԱՆ №18102021-08-0041) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի «Արմենիա» միջազգային օդանավակայան ՓԲԸ-ի լիազորված անձ Արնոլդ Հովասափյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 17772 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Արևելյան փողոցի հարևանությամբ գտնվող «Արմենիա» միջազգային օդանավակայան ՓԲԸ–ին պատկանող անշարժ գույքին (վկայական №18102021-08-0041) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 1/1 ՇԻՆՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2023 թվականի № 2189-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 10,00 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1223-0080) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Գ. Նժդեհի փողոցի հարևանությամբ գտնվող 10,00 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1223-0080) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, 1/10 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2023 թվականի №2188Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 10,00 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001- 0050-0002) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոցի հարևանությամբ գտնվող 10,00 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001- 0050-0002) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ, 9/16 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2023 թվականի № 2187-Ա

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՄԻԿՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑ, 23Ա ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մամիկոն Հովհաննիսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №17812 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Ժառանգության իրավունքով քաղաքացի Մամիկոն Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաք, Շիրվանզադեի փողոց, 23ա հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑ, 23/1 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2023 թվականի №2186-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՏԵՔՍՏԻԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱ-ԽՈՀԱՆՈՑ 2 ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №021042) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Դանիել Գրիգորյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №17581 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Տեքստիլագործների ֆաբրիկա-խոհանոց 2 տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №021042) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՇՆՈՐՀԱԼՈՒ ՓՈՂՈՑ, 19/2 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

31.08.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2023 թվականի №2185-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 52 ՇԵՆՔ, 1Ա ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №0109669) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Զենֆիրա Մալխասյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №17677 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի, 52 շենք, 1ա բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական № 0109669) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ, 52 ՇԵՆՔ, 1/1 ԲՆԱԿԱՐԱՆ**

31.08.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«__31__» __օգոստոսի__ 2023 **թվականի** N__2184__-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏ 35 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 71,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (52,16 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անուշավան Հարությունի Ղարագյոզյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1371949) Գյումրի քաղաքի Մսի Կոմբինատ N 35 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 71,6 (յոթանասունմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին(52,16(հիսուներկու ամբողջ տասնվեց հարյուրերորդական)) մակերեսով մառան:

Քաղաքացի Անուշավան Հարությունի Ղարագյոզյանինը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ մառանը օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, հիմք ընդունելով քաղաքացի Անուշավան Հարությունի Ղարագյոզյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 26-ին N 15696 թվագրմամբ ) ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023SLBV2R ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Անուշավան Հարությունի Ղարագյոզյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մսի Կոմբինատ N 35 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 71,6(յոթանասունմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով մառանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 119787 (մեկ հարյուր տասնինը հազար յոթ հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անուշավան Հարությունի Ղարագյոզյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» դեկտեմբերի 2023 **թվական** N 2183-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՖՈՒԼՏՈՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» № 2047-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանը Գյումրի համայնքի Սովխոզ 17 դոս շենք 1 թիվ 10 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարելու խնդրանքով: Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» № 2047-Ա որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, « Իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ,3-րդ մասերի դրույթներով՝

**Որոշում եմ.**

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 11-ի № 2047-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի 1-ին ենթակետի, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի «Գրիգորյանին» բառերը փոխարինել «Մալխասյանին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

**2023թ. Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2023 թվականի N 2183-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ն.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 797,22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 263,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, ( 222,44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ն.Ստեփանյան փողոցի հարևանությամբ 797,22(յոթ հարյուր իննսունյոթ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 263,35 (երկու հարյուր վաթսուներեք ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական ) քառակուսի մետր արտաքին 222,44 (երկու հարյուր քսաներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային Ստեփանյանօբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաս*տատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝, որը կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023P7kVVC ծածկագրով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ն.Ստեփանյան փողոցի հարևանությամբ 797,22 (յոթ հարյուր իննսունյոթ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 263,35 (երկու հարյուր վաթսուներեք ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական ) քառակուսի մետր արտաքին, 222,44 (երկու հարյուր քսաներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական ) ներքին մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արթուր Պատվականի Նազարյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

31.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք.Գյումրի**
**2023 թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«31» օգոստոսի 2023 **թվականի** N 2181-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 4/8 ՀԱՍՑԵԻ 135.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 4/8 հասցեի 135.02 (մեկ հարյուր երեսունհինգ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ստացել է իրավունքի պետական գրանցում Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20062023-08-0010 վկայական), որտեղ հողամասի գործառնական նշանակությունը նշված է բնակելի կառուցապատման:

Նշված տարածքում հողամասերի միավորում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 4/8 հասցեի 135.02 (մեկ հարյուր երեսունհինգ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«31» Օգոստոսի 2023 **թվականի** N 2180-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 02 -Ի N 1571-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Ռազմիկ Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 26-ին N 15691 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի հուլիսի 02-ի Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղ. Ռազմիկ Հովհաննիսյանին բացօթյա սրճարան կազմակերպելու նպատակով, կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելու մասին» N 1571-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2013 թվականի հուլիսի 17-ի (գրանցված սեղանամատյանում N 5764) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 22072013-08-0038 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռազմիկ Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

31.08.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«30» օգոստոսի 2023 թվականի N 2179-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N 971-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 807-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացի Ստյոպա Վոլոդյայի Պողոսյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 21 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 143,32 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 86,0 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 807-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 11/07/2023 թվականի N Կ-11072023-08-0120 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացի Ստյոպա Վոլոդյայի Պողոսյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 21 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 143,32 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 86,0 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 807-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<143,32 (մեկ հարյուր քառասուներեք ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական)>> թվով և բառերը փոխարինել <<137,08 (մեկ հարյուր երեսունյոթ ամբողջ ութ հարյուրերրորդական)>> թիվը և բառերը բառերով.

2) նախաբանում <<իրավունքը>> բառից հետո լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023JYMWW8 և 2023NGEYF ծածկագրերը>> բառերը և թվերը.

3) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<86,0(ութսունվեց ամբողջ)>> թիվն ու բառերը փոխարինել <<74,34(յոթանասունչորս ամբողջ երեսունչորս հարյուրերրորդական)>> թվով և բառերով:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի N 807-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 2023 թվականի ապրիլի 17-ի N 971-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

30.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«30» օգոստոսի 2023 թվականի N 2178-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 08-Ի N 1156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 08-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 577,2 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 192,79 քառակուսի մետր արտաքին (125,01 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 1156-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 10/08/2023 թվականի N 10082023-08-0122 որոշում) ։ Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 08-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 577,2 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 192,79 քառակուսի մետր արտաքին (125,01 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 1156-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<125,01(մեկ հարյուր քսանհինգ ամբողջ մեկ հարյուրերորդական>> թիվը և բառերը փոխարինել <<154,49 (մեկ հարյուր հիսունչորս ամբողջ քառասունինը հարյուրերորդական)>> թվով և բառերով:

30.08.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» օգոստոսի 2023 **թվականի** N 2177-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԶԱՏՈՒՀԻ ՌՈՒԲԻԿԻ ՎԱՆՈՅԱՆԻՆ (3/5 ՄԱՍ), ՌՈՒԲԵՆ ՄԻՇԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (1/5 ՄԱՍ) և ՑՈԼԱԿ ՄԻՇԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (1/5 ՄԱՍ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 83/1 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 23.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 14.63 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆԿՈՒՂԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 ԴՈՒՌԸ, 1 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 83/1 հասցեի բնակելի տունն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Ազատուհի Ռուբիկի Վանոյանին (3/5 մաս), Ռուբեն Միշայի Մանուկյանին (1/5 մաս) և Ցոլակ Միշայի Մանուկյանին (1/5 մաս) (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2412189 վկայական, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 17.06.2022թ. N 1145, N 1146):

Նշված վկայականում հողամասի մակերեսը գրված է 148.0 (մեկ հարյուր քառասունութ) քառակուսի մետր: Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, որի արդյունքում պարզվել է, որ N 2412189 վկայականում նշված հողամասի կողմնային չափերի և կոորդինատների համաձայն հողամասի մակերեսը կազմում է 171.87 (մեկ հարյուր յոթանասունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր:

Ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տան օրինական հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 23.39 (քսաներեք ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 14.63 (տասնչորս ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով նկուղ, ինքնակամ բացված է 2 (երկու) դուռ, 1 (մեկ) պատուհան (հիմք՝ շինության բնութագիր-հավելված 3):

Նկատի ունենալով վերոգրյալը, փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը ճշտելու, մեխանիկական սխալն ուղղելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Ազատուհի Ռուբիկի Վանոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 12-ին N 14654 թվագրմամբ) '

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել Ա/Ձ Արսեն Նուրիջանյանի կողմից կազմված, քաղաքացիներ Ազատուհի Ռուբիկի Վանոյանին (3/5 մաս), Ռուբեն Միշայի Մանուկյանին (1/5 մաս) և Ցոլակ Միշայի Մանուկյանին (1/5 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 83/1 հասցեի շինության հողամասի հատակագիծը՝ 171.87 (մեկ հարյուր յոթանասունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերը նշված հողամասի մակերեսի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:

3. Քաղաքացիներ Ազատուհի Ռուբիկի Վանոյանին (3/5 մաս), Ռուբեն Միշայի Մանուկյանին (1/5 մաս) և Ցոլակ Միշայի Մանուկյանին (1/5 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 83/1 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 23.39 (քսաներեք ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 14.63 (տասնչորս ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով նկուղը, ինքնակամ բացված 2 (երկու) դուռը, 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 71913 (յոթանասունմեկ հազար ինը հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ազատուհի Ռուբիկի Վանոյանին, Ռուբեն Միշայի Մանուկյանին և Ցոլակ Միշայի Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-05
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«30» օգոստոսի 2023 թվականի N2176Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 2 ԹԱՂԱՄԱՍ N 6/5 ՀԱՍՑԵԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ՝ ՀԱՑԻ ՓՈՒ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արագած թաղամաս N 6/5 հասցեի 209.77 (երկու հարյուր ինն ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է «ԲՌՕԴԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հիմք՝ 16.01.2013 թվ. ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի տեղեկանք իրավաբանական անձի (անձանց) միացման մասին իրավաբանական անձի պետական գրանցման N03Ա216770 վկայականը, 28.04.1998 թվ. մասնավորեցման պայմանագիրը և «ԲՌՕԴԵ» ՍՊԸ-ի կանոնադրությունը):

«ԲՌՕԴԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վաչագան Նալբանդյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին Գյումրի քաղաքի Արագած թաղամաս N 6/5 հասցեի 172,14 (մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով արտադրամասի՝ հացի փռի նպատակային նշանակությունը արտադրականից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը՝ որպես խանութ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի N88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի», նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի հուլիսի 07-ի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» NԿ-07072023-08-0079 որոշումը և հիմք ընդունելով «ԲՌՕԴԵ» ՍՊԸ-ի տնօրեն Վաչագան Նալբանդյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 10-ին N 14369 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Արագած թաղամաս N 6/5 հասցեի 172,14 (մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով արտադրամասի՝ հացի փռի նպատակային նշանակությունը արտադրականից հասարակական, իսկ գործառական նշանակությունը՝ որպես խանութ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին «ԲՌՕԴԵ» ՍՊԸ-ի տնօրեն Վաչագան Նալբանդյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«30» օգոստոսի 2023 թվականի N 2175 Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԴԻԿ ՕՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԵՐՑԵՆԻ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ N 22 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 44,81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 190,48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ռուդիկ Օնիկի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց 5-րդ նրբանցք N 22 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 190,48 (մեկ հարյուր իննսուն ամբողջ քառասունութ հարյուրերորդական ) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ, ,օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 44,81 (քառասունչորս ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Ռուդիկ Օնիկի Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին >> օրենքով 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ( և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22., կետի հիմք ընդունելով քաղաքացի Ռուդիկ Օնիկի Վարդանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 29.06..2023թ. N 13674թվագրմամբ ), որը կադաստրի կոմիտեում հաշվառված է՝2023VL6R6A ,ծածկագրերով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Ռուդիկ Օնիկի Վարդանյանի (ծնված՝ 30.01..1959թ.) սեփականության իրավունքը իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց 5-րդ նրբանցք N 22 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 44,81 (քառասունչորս ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Ռուդիկ Օնիկի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Գերցենի փողոց 5-րդ նրբանցք N 22 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 190,48 (մեկ հարյուր իննսուն ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները ճանաչել օրինական,
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռուդիկ Օնիկի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.08.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» «օգոստոսի» 2023 թվական N 2179 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 789 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Մանուշակ Լյուդվիգի Լոքյանը (անձնագիր՝ AS 0458317, տրված՝ 28.11.2018 թ., 001-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 789 որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություններ կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետում Մանուշակ Լյուդվիգի Լոքյանի ազգանունը «Լոքյան»–ի փոխարեն գրվել է «Լոգյան» (հիմք՝ անձնագիր՝ AS 0458317, տրված՝ 28.11.2018 թ., 001-ի կողմից), 2-րդ ենթակետում Լյուդվիգ Լոքյանի ազգանունը «Լոքյան»–ի փոխարեն գրվել է «Լոգյան» (հիմք՝ մահվան վկայական՝ ԱԲ № 258633, տրված՝ 21.10.2016 թ., Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից), 3-րդ ենթակետում Լուսյա Լոքյան ազգանունը «Լոքյան»–ի փոխարեն գրվել է «Լոգյան» (հիմք՝ անձնագիր՝ AS 0458312, տրված՝ 28.11.2018 թ., 001-ի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Մանուշակ Լյուդվիգի Լոքյանի 2023 թվականի օգոստոսի 24-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 17618 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 789 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 4-րդ կետի 1-ին ենթակետում՝ Մանուշակ Լյուդվիգի Լոգյանի անվանման մեջ «Լոգյան» բառը փոխարինել «Լոքյան» բառով:

2) 4-րդ կետի 2-րդ ենթակետում՝ Լյուդվիգ Լոգյան անվանման մեջ «Լոգյան» բառը փոխարինել «Լոքյան» բառով:

3) 4-րդ կետի 3-րդ ենթակետում՝ Լուսյա Լոգյան անվանման մեջ «Լոգյան» բառը փոխարինել «Լոքյան» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մանուշակ Լյուդվիգի Լոքյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.08.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«30»«Օգոստոսի» 2023 թվական N 2173 –Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի $219^{1}$ հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 24-ին ժամը՝ 11:30-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Մսի Կոմբինատ, 2–րդ շարք, տուն 12) ներկայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքի «Հավերժ Հիշատակ» ՓԲ ընկերության տնօրենի ժ/պ՝ Է.Բաղրամյանի կողմից 2023 թվականի հուլիսի 24-ին կազմած քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանի կողմից Օրենսգրքի՝ 156.1–րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքի «Հավերժ Հիշատակ» ՓԲ ընկերության տնօրենի ժ/պ Է.Բաղրամյանը 2023 թվականի հուլիսի 24-ին հայտնաբերել և օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել է քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանի կողմից Օրենսգրքի 156.1–րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը:

2023 թվականի հուլիսի 24–ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանի առանց համապատասխան թույլտվության Գյումրի քաղաքի, 2-րդ գերեզմանատան արևելյան հատվածում,

առանց տեղեկացման խախտելով հուղարկավորությունների կազմակերպման ու իրականացման համար նախատեսված կանոնները, կատարել է իր մոր հուղարկավորությունը:

Քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովվել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ ընդունում է իրավախախտում կատարելու փաստը:

Քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի հուլիսի 24-ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ և կից ներկայացրած լուսանկարով:

Օրենսգրքի 156.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հուղարկավորությունների կազմակերպման և իրականացման համար նախատեսված կարգերն ու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

Ի նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 2-րդ մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

## 3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 156.1-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

5. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Արթուր Վարազդատի Պետրոսյանին կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

6. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

30.08.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<30>> օգոստոսի 2023 թվականի N 2172-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՄԵԼՍԻԿԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության տնօրենի,Վիեննայի քաղաքապետի նամակ- հրավերը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մելսիկի Սամսոնյանին գործուղել Ավստրիա՝ Վիեննա քաղաքում կայանալիք << Քաղաքների կամուրջ 2023 >> խորագրով միջոցառմանը մասնակցելու նպատակով:

2. Գործուղման ժամկետը՝ 4 (չորս) օր՝ 2023 թվականի սեպտեմբերի 4-ից 7-ը ներառյալ:

3.Գործուղման ընթացքում Գյումրի համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Ռուդիկի Պապիկյանին:

4.Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Ռուդիկի Պապիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի